ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4
« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՇՁԲ-10/5» ԾԱԾԿԱԳՐՈՎ ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 28-ը փետրվարի 2018թ.
Ժամը 11[40]

Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու՝
ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի պետի խորհրդական Կ. Հակոբյան,
գնահատողներ՝
ՀՀ ՊՆ կապիտալ շինարարության և զորքերի բնակավորման վարչության պետի տեղակալ, ՔՀԾ 1-ին դասի խորհրդական Մ. Խալաթյան,
ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանության հատուկ օպերատիվ ծառայության սպա, լեյտենանտ Հ. Բաղալյան,
ՀՀ ՊՆ իրավաբանական վարչության իրավական ապահովման բաժնի ավագ սպա, փոխգնդապետ Ա. Մաղաքյան,
Գնումները համակարգող՝
ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության աշխատանքների և ծառայությունների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի պետ, ՔՀԾ 1-ին դասի խորհրդական Ռ.Մարդոյան:

« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՇՁԲ-10/5» ծածկագրով մրցույթի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Ռ. Մարդոյան)

1. Որպես շտկում ներկայացված փաստաթղթերը գնահատելու մասին
2. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.
3.Ներկայացված գնային առաջարկներիի հիման վրա «ՀՀՊՆՆՏԱԴ-ԲՄԱՇՁԲ-10/5» ծածկագրով մրցույթի 1-ին և այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.
4. Տեղեկություններ՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.
5. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

1. Որպես շտկում ներկայացված փաստաթղթերը գնահատելու մասին

(Ռ. Մարդոյան)

1.1 Քննարկելով «Հ.Կ.Շ.Ի.Կ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը՝ հանձնաժողովն արձանագրեց, որ դրանք համապատասխանում են ընթացակարգի հրավերի պահանջների: «Հ.Կ.Շ.Ի.Կ» ՍՊԸ-ի տվյալները գնահատվեցին բավարար:

1.2 Հաշվի առնելով այն հանգամանքը, որ սահմանված ժամկետում «Թորդադ» ՍՊԸ-ի կողմից որպես շտկում պահանջված փաստաթղթերը չներկայացվեցին և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2011թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետի պահանջները՝ գնահատող հանձնաժողովը որոշեց մերժել «Թորդադ» ՍՊԸ-ի հայտը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

2. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին

(Ռ. Մարդոյան)

2.1 «Գնումների մասին» ՀՀ օրենքի և մրցույթի հրավերի պահանջներին համապատասխանող գնային առաջարկ են ներկայացրել հետևյալ մասնակիցները

Չափաբաժին N 1՝ Շենքերի, շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքներ (գերեզմանների կառուցում).
Նախահաշվային գին՝ 13,897,980 դրամ

Հ/հ	Մասնակցի անվանում	Առաջարկած գին		
		Առանց ԱԱՀ	ԱԱՀ	ԱԱՀ-ով
1	«Սասունասար» ՍՊԸ	**9,150,000**	**1,830,000**	**10,980,000**
2	«ԱԲԱԿ» ՍՊԸ	9,700,000	1,940,000	11,640,000
3	«Թորդաղ» ՍՊԸ	23,604,125	4,720,825	28,324,950
4	«Կոմերցիալ Պարտներս» ՍՊԸ	9,491,950	1,898,390	11,390,340
5	«Հ.Կ.Շ.Ի.Կ.» ՍՊԸ	9,651,375	1,930,275	11,581,650
6	«ՄԱՎ-ՇԻՆ» ՍՊԸ	10,000,000	2,000,000	12,000,000
7	«Վահրադյան Շին» ՍՊԸ	9,532,500	1,906,500	11,439,000

2.2 Մասնակիցների գնային առաջարկի հաշվարկման ճշտությունը /հայտով ներկայացված գնային առաջարկների թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը/, ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունները համապատասխանում են /ճիշտ են/:

2.3 Սույն մրցույթի շրջանակներում գների նվազեցման բանակցություններ չեն վարվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

3. Ներկայացված գնային առաջարկներիի հիման վրա «ՀՀՊՆՆՏԱԴ-ԲՄԱՇՁԲ-10/5» ծածկագրով բաց մրցույթի 1-ին և այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.

(Ռ. Մարդոյան)

3.1 Էլեկտրոնային գնահատման արդյունքում «ՀՀՊՆՆՏԱԴ-ԲՄԱՇՁԲ-10/5» ծածկագրով բաց մրցույթի հանձնաժողովի որոշմամբ ներկայացված գնային առաջարկների հիման վրա մրցույթում 1-ին տեղ զբաղեցնող ճանաչվեց «Սասունասար» ՍՊԸ-ն: Բավարար գնահատված մնացած մասնակիցները ճանաչվեցին հաջորդող տեղեր զբաղեցրած մասնակիցներ՝ ըստ ներկայացված գների շահավետության:

3.2 Հանձնաժողովը որոշեց հրապարակել հատուկ նիստի արդյունքները և առաջին տեղ զբաղեցրած մասնակցին առաջարկել ներկայացնելու «ՀՀՊՆՆՏԱԴ-ԲՄԱՇՁԲ-10/5» ծածկագրով բաց մրցույթի **հրավերի 2-րդ մասի (հայտը պատրաստելու հրահանգի) 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը**:

3.3 Հանձնաժողովը որոշեց Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև ընթացակարգի հրավերի «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին վերաբերող պարբերությամբ նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

4. Տեղեկություններ՝ հայտի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

(Ռ. Մարդոյան)

4.1 Մասնակիցների կողմից հայտերի վերաբերյալ հարցումներ չեն կատարվել

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

5. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Ռ. Մարդոյան)

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՇՁԲ-10/5» ծածկագրով մրցույթի հաջորդ նիստը հրավիրել 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացվելիք հրավերով նախատեսված փաստաթղթերը հանձնաժողովի կողմից գնահատելու վերջնաժամկետի օրը ժամը 11[00]-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

Գնահատող(ԳԱՊ)	Կ. Հակոբյան
Գնահատող	Մ. Խալաթյան
Գնահատող	Հ. Բաղալյան
Գնահատող	Ա. Մաղաքյան
Գնումները համակարգող՝	Ռ. Մարդոյան